

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐՄԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

քանասիրական գիր. թեկնածու, ՀՊՏՀ

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յուրաքանչյուր լեզվում առկա են լեզվաոճական առանձին միավորներ՝ դարձվածքներ, որոնց ընկալումը այնքան էլ միանշանակ չէ: Ամենից առաջ պետք է նշել, որ արդի լեզվաբանության մեջ «դարձվածք» կամ դարձվածային միավոր (ԴՄ) ասելով հասկացվում են որոշակի առանձնահատկություններով օժտված արտահայտությունները՝ կայուն կապակցություններ, որոնք ունեն այլաբերական իմաստ, ոճական ուրույն արժեք եւ կայունություն (բացարձակ կամ հարաբերական առումով): Դրանք այլաբերական են, որովհետեւ կառուցվում են որեւէ այլաբերական միջոցի (փոխաբերություն, փոխանունություն, համեմատություն, չափազանցում, նվազաստույթ եւ այլն) հիման վրա: Ունեն ոճական արժեք, որովհետեւ պատկերավոր են եւ ներգործում, առաջացնում են հուզափմաստային որոշակի տարերք եւ գնահատողական վերաբերմունք՝ այս կամ այն երևույթի հանդեպ, կայուն են, որովհետեւ հանդես են գալիս որպես բառերի՝ խոսքիմասային առանձին միավորների (գոյական+բայ, ածական+գոյական եւ այլն) կայուն կամ համեմատաբար կայուն զուգորդումներ: Դարձվածքի նման ընկալումը կարելի է կոչել *նեղ*: Ժամանակակից դարձվածաբանությունը հիմնականում զբաղվում է այնպիսի դարձվածքներով, որոնք ենթակա են այս նեղ ընկալմանը, ընդ որում *նեղ* բառն այստեղ ամենեւին էլ չի նշանակում սահմանափակ կամ նեղ ընկալում. այն ավելի շուտ նշանակում է որոշակիացված, հատուկ ընկալում, որի նպատակն է ճշգրտություն մտցնել դարձվածք եզրույթի իմաստային ընդգրկման մեջ:

Ի հակակշիռ նշյալ «նեղ» ընկալման, առկա են նաև դարձվածքի հարաբերականորեն լայն եւ բացառապես լայն ընկալումներ: Հարաբերականորեն լայն ընկալման ներքո սովորաբար հասկացվում են բոլոր տեսակի կայուն կապակցությունները («Ցավը կրել» «Ներսուդուրս անել», «Ձեռք ձեռքի» եւ այլն), ինչպես նաև առածները, թեւավոր խոսքերը, ասացվածքները, խրատախոսքերը եւ այլն:

Բացառապես լայն (թեւեւ «բացառապես» բառն էլ պետք ընկալել հարաբերական իմաստով) ընկալմամբ՝ դարձվածքներ են ոչ միայն նշվածները, այլեւ խոսքի ավարտուն հատվածները: Հնում դարձվածք եզրույթի ներքո հասկացվել են այս ամենը, ներառյալ նաև իմաստախոսքերը, ասույթները եւ նույնիսկ առակներն ու շրջասույթները, այն ամենը, որ օժտված է իմաստային ու ոճական ուրույն հնչերանգով:

Ուշագրավ է, որ Աստվածաշնչի հայկական կանոնի 1-ին գլխում ասվում է. «Ճանաչել իմաստութիւնն ու խրատը, իմանալ հանճարի խօսքերը, ընկալել խօսքի բարդ դարձուածքները, հասկանալ ճշմարիտ արդարութիւնը եւ ուղղել իրաւունքը ...» (Առակ. Ա. 2-3):

Նեղ կամ ավելի ստույգ՝ հույժ մասնակի ընկալմամբ դարձվածքը բաների այնպիսի գուգորդությունն է կամ կապակցությունը, «որի մեջ բաղադրիչները վերաիմաստավորված են, այսինքն՝ դարձվածքի բաղադրիչներից յուրաքանչյուրն այդ կապակցության մեջ չի պահպանում իր բառային, բանարանային բուն իմաստը եւ ձեռք է բերում նոր նշանակություն, այսինքն՝ սովյալ դարձվածքի արտահայտած ընդհանուր իմաստը այդ բաղադրիչների մեկսանիկական գումարը չէ: Եւ անշուշտ, դարձվածքի համար կարեւորը նաև նրա փոխաբերական-այլաբանական իմաստ արտահայտելն է: Ինչ խոսք, դարձվածքների՝ նման բնութագրում տալիս անհրաժեշտ է նկատի ունենալ դարձվածքի մեջ մտնող բաղադրիչների շարահյուսական կապը, նրանց հարաբերությունն ու իմաստային միաձուլության աստիճանը, ըստ որի էլ կատարվում է դարձվածքների իմաստային-շարահյուսական դասակարգում»¹: Այս նույն բնորոշումը, նրբերանգային որոշ տարբերակներով երևան է գալիս դարձվածքանական ու լեզվաբանական շատ ուսումնասիրություններում՝ շեշտադրելով այն առանցքային միտքը, որ դարձվածային բաղադրիչները, այսինքն՝ բառերը, դարձվածքի համատեքստում կորցնում են հանրայնորեն գիտակցված ու ընդունված իրենց իմաստները, քանի որ գուգորդության մեջ վերաիմաստավորվում են եւ արտահայտում նոր՝ դարձվածային իմաստ, երբեմն այնքան պատկերավոր եւ անսովոր

¹ Լ.Կ. Եզեկյան, Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2003, էջ 181-182:

գուգորդմամբ, որ վերածվում են իդիոմների կամ էլ հարաբերականորեն ազատ դարձվածային բաղադրիչներ ունեցող կապակցությունների²:

Քննարկումները ցույց են տալիս, որ դարձվածքների ընկալման թե՛ *սեղ*, թե՛ *լայն* հայեցակերպերը ունեն իրենց թերություններն ու առավելությունները: Ինչեւէ, անկախ այսպիսի վիճահարույց հարցադրումներից, ի վերջո մշակվում է դարձվածքների ընկալման ժամանակակից հայեցակերպը, եւ ծագում են նորանոր հարցեր, որոնց պատասխանելը ինքնաբերաբար խթանում է դարձվածաբանության զարգացմանը: Ինչ վերաբերում է վերոհիշյալ խնդրին, թե արդյո՞ք դարձվածքների տարբերակման հիմքում պետք է դնել միայն այն իրողությունը, որ դարձվածքների բաղադրիչները չունեն բառային անկախություն, եւ դարձվածքները իմաստային ու շարահյուսական առումներով տարբալուծելի չեն (քանի որ դարձվածքը փաստորեն կարող է ներկայացվել որպես բառային մեկ ամբողջություն), դեռեւս կարոտ է առավել տրամաբանական ու մանրակրկիտ հետազոտությունների: Մեզ միանգամայն համոզիչ է թվում մի շարք դարձվածաբանների, մասնավորապես Լ. Եզեկյանի հիմնավորումը. «Որքան էլ այս տեսության հետևորդները նշում են առածների, ասացվածքների եւ թեւավոր խոսքերի տարբերությունը դարձվածքներից, բայց եւ այնպես, ի վերջո, չեն կարող անտեսել այն հանգամանքը, որ դրանք բավականաչափ շփման եզրեր ունեն. դեռ ավելին՝ մի շարք դեպքերում կարող է անցում կատարվել առածից դեպի դարձվածք (ինչպես առհասարակ լեզվական բազմաթիվ իրողություններից կարող են կազմվել դարձվածքներ), ինչպես՝ ավագի վրա տուն շինել, մկան ծակը հազար թումանով առնել, կաղ էշով քարավանին խառնվել եւ այլն: Չպետք է մոռանալ նաեւ, որ եւ՛ առածների, եւ՛ ասացվածքների, եւ՛ թեւավոր խոսքերի կազմում կարող են լինել մի շարք դարձվածքներ՝ «Պարիկի լեզուն կարճ կլինի», «Կալ մընտղ աղվեսը արյունն աչքի տակ կտոնի», «Գինին մարդուն չի մեղցնի, բայց շան օրը կգցի», իսկ մի շարք դարձվածքներ էլ առաջացել են հենց առածների եւ ասացվածքների հիման վրա, ինչպես՝ *պղպոր ջրում ձուկ բռնել*, *ձեռքը փրփուրին գցել*, *ջուր ծեծել* եւ այլն»³: Այնուհետեւ *դարձվածք* հասկացության որոշարկմանը գուգրնթաց, քննարկման նյութ են դարձել նաեւ

² Լ. Եզեկյան, Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2003, էջ 182. Ա. Սուրիասյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1999, էջ 302-304. Գ. Զահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն եւ բառակազմություն, Երևան, 1989, էջ 319. Էդ. Աղայան, Պատմամշակութային մեթոդը լեզվաբանության մեջ, Երևան, 1957, էջ 46 եւ ուրիշներ:

³ Լ. Եզեկյան, նշվ. աշխ., էջ 188:

դարձվածքների տեսակները՝ կազմախոսական (սոմատիկ), միջազգային, պատմամշակութային, առասպելաբանական, կրոնական եւ այլն, դարձվածքների ձեւաբանա-շարահյուսական տարբեր կառուցվածքները, տարալեզու դարձվածքների ընդհանրությունները, այդ ընդհանրությունների պատճառները եւ ազգա-լեզվամշակութային առանձնահատկությունները, դրանց թարգմանելիության խնդիրները եւ այլն: Արդի շրջանում ավելի ու ավելի են շատանում դարձվածքների տեսակները՝ ի հաշիվ սոցիալական, վարչաքաղաքական, հոգեբանական-փիլիսոփայական, իրավաբանական ու գիտատեխնիկական կյանքին վերաբերող լեզվաոճական արտահայտությունների, որոնց մի մասը հատուկ բնույթի դարձվածքներ ու իդիոմատիկ արտահայտություններ են: Բնականաբար, դրանք եւս դառնում են քննարկման առարկա:

Դարձվածքների տարատեսակ համակարգում մեծ թիվ են կազմում կազմախոսական դարձվածքները, որովհետեւ, ինչպես նշում են հետազոտողները, դարձվածքների գերակշիռ մասը մարդու մարմնի մասերի անուններով են կազմված՝ աշխարհի տարբեր լեզուներում: Ըստ որոշ հաշվումների՝ հայերենում միայն «գլուխ» բառով կազմվել են 650, «աչք»-ով՝ 350, «բերան»-ով՝ 260, «երես»-ով՝ 180 դարձվածքներ: Որքան էլ, սակայն, այս հաշվումները գնահատելի են եւ ուշադրություն հրավիրող, այնուամենայնիվ, կարծում ենք, որ դրանց թիվը շատ ավելին է. ամեն դեպքում դա են ցույց տալիս հայերեն, հայերեն-ռուսերեն, ռուսերեն-հայերեն, հայերեն-անգլերեն եւ անգլերեն-հայերեն դարձվածաբանական բառարանները, որոնցում բացակայում են շատ աստվածաշնչյան կազմախոսական դարձվածքներ, ինչպես նաեւ ժողովրդախոսակցական լեզվում, հայերենի բարբառներում եւ գեղարվեստական գրականության մեջ տարածված, թարգմանություններով հայերենին անցած մի շարք դարձվածային կապակցություններ:

Իհարկե, չպետք է մոռանալ, որ դարձվածաբանական բառարանների կազմումը եւ դարձվածաբանական ուսումնասիրությունները պահանջում են շարունակական, հարատեւ աշխատանք եւ, այսպես ասած, մշտադիտարկում՝ թարգմանությամբ ի հայտ եկող ԴՄ-ները գրանցելու, բացթողումները լրացնելու, լեզվաոճական նոր առաջացումները արձանագրելու առումով: Շատ կարեւոր են նաեւ կազմախոսական ԴՄ-ների առավել համակողմանի եւ հիմնարար քննարկումները, դրանց առաջացման նախապատճառների ուսումնասիրումը, սկզբնատիպային ձեւերի եւ դրանց գե-

դարվեստական տարրերակների հետագոտումն ու բնութագրումը՝ լեզվաբանաստեղծական վերլուծության նորագույն մեթոդի համաձայն:

Որպես դարձվածքների մի ստվար շերտ՝ կազմախոսական դարձվածքները ամենից առաջ բնութագրվում են իրենց հնությանը եւ նույն կամ գրեթե նույն տարրերակների լայն տարածվածությամբ աշխարհի տարբեր լեզուներում (հայերենում, անգլերենում, գերմաներենում՝ նաեւ հնդկացիական կամ աֆրիկական ցեղախմբերի լեզուներում): Հետաքրքիր է, որ այսօր տարբեր լեզուներում շրջանառվող կազմախոսական ԴԾ-ները մեծ մասամբ ունեն իրենց նախասկզբնական, արքետիպային ձևերը՝ ավանդված վաղնջական ժամանակներից՝ թե՛ բանավոր, թե՛ գրավոր եղանակներով, ի մասնավորի՝ որպես աղբյուր ծառայող բանահյուսական-ազգագրական ուսումնասիրություններով եւ Աստվածաշունչը կազմող սուրբ տեքստերով: Դրանք նույնությամբ կամ մասնակի փոփոխակներով մեզ են հասել գեղարվեստական գրականությամբ:

Կազմախոսականները հիմնականում նույնական կամ համընդհանրական դարձվածքներ են, բայց, այնուամենայնիվ, դրանք իրենց վրա կրում են որոշ տարբերիչ, հատկանշական դրոշմներ, որոնք արգասիք են էթնոմշակութային եւ լեզվամշակութային տարբերությունների, որոնք առկա են բրիտանական ու հայկական էթնոսների եւ մշակույթների միջեւ (թեեւ աստվածաշնչյան լեզվամտածողության առումով այդ տարբերությունները, լավ կլինի ասել՝ երանգային որոշ տարբերություններն այնքան էլ էական չեն. առավել էական են ընդհանրությունները, իսկ տարբերությունները հնարավորություն են ընձեռում երկու լեզուներում առկա ընդհանուր, տիպաբանորեն նույնական լեզվական միավորները դիտարկել իմաստանշանային մեկ այլ հարթության վրա՝ վեր հանելով դրանց հասկացման կամ մեկնաբանման մի նորահայտ կողմը):

Բերենք վերն ասվածը փաստարկող կազմախոսական բնույթի մեկ այլ դարձվածք, որտեղ առանցքը «աչքն» է, եւ որի այլաբանական-փոխաբերական կիրառմամբ բազմաթիվ դարձվածքներ կան թե՛ անգլերենում, թե՛ հայերենում:

“Made a covenant with mine eyes; why then should I think upon a maid?”
(Job 31. 1).

«Աչքերիս հետ ուխտ արեցի. ուրեմն ինչպե՞ս մտածեմ կույսի վրա»
(Հոբ ԼԱ. 1):

Ընդգծյալ դարձվածքում անգլերենի “made”-ը նշանակում է՝ արեցի, ավելի ստույգ՝ ի գործ դրեցի: Եթե անգլերենը թարգմանենք հայերեն,

ապա կստանանք մոտավորապես՝ «Աչքերիս հետ ուխտ արեցի» կամ «Աչքերիս հետ ուխտ ի գործ դրեցի»: Ակնհայտ է, որ հայերեն եւ անգլերեն իմաստները գրեթե նույնն են (թեւեւ անգլերենի մեջ առկա են *ի գործ դրեցի, գործեցի*), որոնցից համեմատաբար «ազատ» է հայերենը: Հայերենում առավելապես «ներկա» է (կարելի է ասել՝ ներկա բացակայություն) «կնքեցի» իմաստը: Պատահական չէ, որ գրական արեւելահայերենով այդպես էլ թարգմանված է.

«Դաշինք *կնքեցի* աչքերիս հետ ես, ու չնայեցին նրանք մի կույսի» (Հոր ԼԱ. 1):

Կարծում ենք, որ հայերենում թեւեւ առկա է «կնքեցի» իմաստը, սակայն լավ կլիներ, եթե արեւմտահայերեն թարգմանությունների վրա հիմնվելով՝ թարգմանվեր այսպես՝ «*Ես ուխտ կապեցի աչքերիս հետ*»: Ռուսերեն թարգմանությունում այսպես է՝ “*Завет положил я с глазами моими, чтобы не помышлять мне о девице*” (Книга Иова, 31. 1):

Ռուսերենում, փաստորեն, առկա է *положил-դրեցի* իմաստը: Այսպիսով, նույն լեզվական միավորը, լեզվամշակութային ավանդույթներից ու առանձնահատկություններից ելնելով, թարգմանվել է յուրակերպ.

1) Անգլերենում առավելապես շոշափելի է դարձել “made” (արեցի, ի գործ դրեցի կամ ի կատար ածեցի) իմաստը:

2) Հայերենում, թեւեւ թարգմանված է *արեցի* (արեւմտահայերեն՝ ըրի), սակայն «հեռակա կարգով» առկա կամ շոշափելի են նաեւ «կնքեցի» կամ «կապեցի» իմաստները:

3) Ռուսերենում թարգմանված է “*положил*” (*դրեցի*), որով կարծես շեշտադրվել է ուխտ կապելու ուղղահայաց (երկնքից երկիր) բնույթը, այսինքն այն, որ ուխտը վերելից է դրվում Աստծո եւ ուխտավոր մարդու միջեւ:

Այս բոլոր թարգմանական նրբերանգները գալիս են լրացնելու աստվածաշնչյան հիմնական իմաստը եւ հնարավորություն են ընձեռում տվյալ դարձվածքի առավել լիարժեք բացահայտման համար:

Բերենք դարձվածքի մեկ այլ օրինակ՝ վերստին կազմված «աչք»-ով.

“And it came to pass, as he sat at meal with them, he took bread, and blessed it, and broke, and gave to them. And their eyes were opened, and they knew him; and he vanished out of their sight” (Luke 24. 30-31).

«Եւ երբ նա սեղան նստեց նրանց հետ, հաց վերցնելով՝ օրհնեց, կտրեց այն եւ տուեց նրանց: Եւ նրանց աչքերը բացուեցին ու ճանաչեցին նրան, իսկ ինքը նրանց աչքին աներևոյթ եղաւ» (Դուկ. ԻԴ. 30-31):

Կազմախոսական դարձվածքը՝ “*eyes were opened...*” («...աչքերը բացուեցին») վերելում մատնանշված այն դեպքն է, երբ տվյալ լեզվական միավորը արտաքնապես հանդես է գալիս իբրեւ ազատ կապակցություն, բայց, ըստ էության, այլաբանական իմաստ ունի եւ որպես այդպիսին՝ կայուն է. իսկ եթե կայուն է եւ ունի այլաբերական (փոխաբերական) իմաստ, ուրեմն դարձվածք է: Վերջինիս «կարգավիճակը», այսինքն՝ դարձվածք լինելը, հասկացվում եւ հաստատվում է համատեքստային ամբողջության մեջ: Նշյալ դարձվածքը ուշագրավ է նրանով, որ թե՛ անգլերենում, թե՛ հայերենում այն նույնն է՝ զուգորդված “eyes” (աչքերը) եւ “opened” (բացուեցին) բառերով: Իսկ սա էլ իր հերթին նշանակում է, որ տվյալ դարձվածքը թե՛ անգլերենին, թե՛ հայերենին փոխանցվել է միևնույն արքետիպից՝ Աստվածաշնչից. եւս մեկ հետաքրքիր հայեցակերպ՝ դարձվածքների, տվյալ դեպքում՝ կազմախոսական դարձվածքների վերլուծությունը առավել հանգամանալի դարձնելու առումով:

Վերադառնանք, սակայն, վերը նշված այն դրույթին, որ, նախ, աստվածաշնչյան ԴՄ-ները, մասնավորապես՝ կազմախոսական շատ ԴՄ-ներ, սերում են «մեծ նախահիմքից»՝ ընդհանուր-դիցաբանական անցյալից, եւ երկրորդ, այդօրինակ շատ ԴՄ-ներ թե՛ դիցաբանական ավանդույթում, թե՛ Աստվածաշնչում լինում են երկու տիպի՝ այսպես ասած՝ սովորական եւ անսովոր կամ հոգեւոր իմաստով: «Սովորական իմաստ» ասելով՝ պետք է հասկանալ մարդու կազմախոսական տարրերին (աչք, ականջ, բերան եւ այլն) վերաբերող ավանդական-հանրահայտ-համընդհանուր պատկերացումները, դրանց վերագրվող գործառույթները, օրինակ այն, որ «գլուխը» բարձրագույն դիրքն է գրավում մարդակազմական կառույցում, «ճակատը» խորհրդանշում է միտք եւ կայունություն, իսկ, օրինակ, «սիրտը» համարվում է (=ավանդաբար ընկալվում) մարդու խորհուրդների, խոկումների դուռը, որովհետեւ (ըստ Աստվածաշնչի) մաքուր սիրտն է արտոնություն շնորհում մարդուն՝ տեսնելու Աստծուն, եւ բուն իմաստությունը կապված է «սրտի իմաստության» հետ, ինչպես որ հավաստվում է Սողոմոն թագավորին վերաբերող պատումում.

“And God said to him, “Because you have asked this, and have not asked for yourself long life or riches or the life of your enemies; but have asked for yourself understanding to discern what is right, behold, I now do according to your word. Behold, I give you a wise and discerning mind, so that none like you shall arise after you” (I King 3. 11-12).

Հայերենում (հայկ. կանոն) ասվում է հետևյալը. «Տիրոջը հաճելի եղավ Սողոմոնի այս խնդրանքը եւ Տերն ասաց նրան. «Քանի որ դու այս բանը խնդրեցիր ինձնից, խնդրեցիր ոչ թե կեանքի երկար օրեր, հարստություն կամ քո թշնամիների մահ, այլ խնդրեցիր խելամտություն՝ դատ անելու, ուստի քո ասածի համաձայն եմ վարուելու. քեզ տալիս եմ իմաստուն ու հանճարեղ միտք, այնպես որ ո՛չ քեզնից առաջ է քո նմանը եղել, եւ ո՛չ էլ քեզնից յետո քո նմանը կը յատնուի» (Գ. Թագ. Գ. 10-12):

Լեզուն որպես սոցիալական ու մշակութային կյանքի հայելի են դիտարկել շատ լեզվաբաններ, մշակութաբաններ ու թարգմանաբաններ⁴:

Դարձվածքներ գոյություն ունեն աշխարհի տարբեր լեզուներում: Նրանք մեզ են հասել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր ձևերով, Աստվածաշունչը կազմող տեքստերի, այդ թվում նաեւ տարբեր լեզուներով գեղարվեստական գրականության միջոցով: Այստեղ փորձ արվեց ցույց տալ դարձվածային միավորների նախատիպերը եւ նրանց փոխակերպումները ժամանակի ընթացքում: Կազմախոսական դարձվածքները քննարկվում են իրենց ծագման, կազմավորման փուլում՝ փորձելով նախնական հավատալիքների, ծեսերի եւ աստվածաշնչյան մարդաբանական պատկերացումների արտացոլումները ցույց տալ արքեստիպի նշանակություն ունեցող կազմախոսական դարձվածքներում:

РЕЗЮМЕ

Фразы многочисленны в разных языках мира. До нас они дошли как в устном, так и в письменном виде, через тексты, составляющие Библию, а также через художественную литературу разных языков. Делается попытка указать прототипы фразеологических единиц и их перемены в течении времени. В статье делается попытка показать отражение ранних вероисповеданий, ритуалов и библейских антропологических представлений в соматических фразеологических единицах архетипной значимости. Теоретическая значимость заключается в том, что выбран широкий спектр изучаемого материала. Описание процесса трансформаций этих единиц, перевод антропологических и религиозно-ритуальных представлений на эстетическое и символичное, в целом, выявляет ряд вопросов, тесно связанных с фразеологией, лингвостилистикой и лингвокультурологией.

⁴ Л. Бархударов, Структура простого предложения современного английского языка, Москва, 1996, с. 200.

SUMMARY

Phrases are in great number and exist in various languages of the world. They have reached us both verbally and in written form through the texts comprising the Holy Bible or other literary texts. The article tries to point out the archetypal forms of phraseological units and their transformation in time. Somatic phraseological units are discussed first in the phase of their origin and formation trying to show the reflections of ancient beliefs, rituals and biblical anthropological notions in the somatic phraseological units of archetypal importance. From the theoretical point of view the work makes a contribution to the study of phraseological units in a wider context. Its results can be used in courses of lexicology and contrastive stylistics.

